Գավառի բնապահպանական տեղեկատվության հասարակական Օրհուս կենտրոն

Public Environmental Information Aarhus Center of Gavar

Հասցե. ՀՀ, 1201, ք.Գավառ, ԿենտրոնականՀրապարակ 7
Հեռ. +/ 374/ 77 76 46 41, +/ 374/ 264 6 15 11
Էլ. փոստblejanli@gmail.com

Address Central Square 7, Gavar, 1201, RA
Tel. +/ 374/ 77 76 46 41, +/ 374/ 264 6 15 11
E-mail blejanli@gmail.com

AA-009

14 օգոստոսի 2018թ.

ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և
բնական պաշարների նախարար
Արթուր Գրիգորյանին
պատճեն՝ ՀՀ բնապահպանության նախարար
Էրիկ Գրիգորյանին

Տեղեկատվության ստացման հարցում

Հարգելի պարոն Գրիգորյան

2017թ-ին Կառավարությունն առաջարկով ՀՀ ԱԺ-ն Սևանա լճից օրենքով սահմանված 170 միլիոն խմ ջրառն ավելացրեց 100 միլիոն խմ-ով :
Կառավարությունն իր որոշումը հիմնավորեց նաև Սևան-Հրազդան հիդրոկասկադի էլեկտրաէներգիայի արտադրության ծավալների և ոռոգման տարածքների մեծացմամբ, այն է.
- մեխանիկական ջրարտադրությունը կփոխարինվի ինքնահոսով և կտնտեսվի էլեկտրաէներգիայի 1.2 մլրդ դրամ ծախսը,
- Սևան-Հրազդան դերիվացիոն համակարգի ՀԷԿ-երում լրացուցիչ կարտադրվի շուրջ 97 մլն կվտ. ժամ էլեկտրաէներգիա, որի վաճառքից «Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ի ստացված հասույթը կուղղվի ՀՀ կառավարության կողմից սահմանված նպատակային ներդրումների իրականացմանը:

Հիմք ընդունելով ՀՀ կողմից վավերացրած Օրհուսի համաձայնագիրը և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքը, որպես պատասխանատու մարմին՝ խնդրում եմ Գավառի Օրհուս կենտրոնին տրամադրել պաշտոնական տեղեկատվություն, այն է.

- Ինչքա՞ն էլեկտրաէներգիա է արտադրվել -Հրազդան դերիվացիոն համակարգի ՀԷԿ-երում 2017թ.-ին՝ առանձնացնելով 270մլն. խմ. ջրառի արդյունքում արտադրված էնեկտրաէներգիայի քանակը,
- Ինչքա՞ն հասույթ է ստացվել արտադրված էլեկտրաէներգիայից՝ առանձնացնելով 270մլն. խմ ջրառի արդյունքում արտադրված էնեկտրաէներգիայի վաճառքից հասույթը,
- Ե՞րբ և ինչքա՞ն գումար է մուտքագրվել արտաբյուջետային հաշվին այդ հասույթից
- Պետական կառավարման ո՞ր կառույցն է պատասխանատու այդ գումարի տնօրինման հարցում:

Տեղեկության տրամադրումը մերժելու դեպքում խնդրում ենք գրավոր տեղյակ պահել մերժման հիմքի մասին և հնարավորության դեպքում տրամադրել այն պետական մարմնի կամ պաշտոնատար անձի հասցեն, որին կարող ենք ուղղել հարցումը:

Կանխավ շնորհակալություն

Հարգանքով՝
Լիանա Ասոյան՝ Գավառի ՕԿ համակարգող

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ
ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐ

0010, ք.Երևան-10, Հանրապետության
Հրապարակ, Կառավարական տուն 3.
Հեռ.(011) 52-19-64.Ֆաքս (011) 52-63-65
Էլ. փոստ: minenergy@minenergy.am
Վեբ կայք: www.minenergy.am

01/ԱԿ/15.2/4773-18
21.08.18թ.

ԳԱՎԱՌԻ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ
ՀԱՍԱՐԱՐԱԿԱՆ «ՕՐՀՈՒՍ» ԿԵՆՏՐՈՆԻ
ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՏԻԿԻՆ ԼԻԱՆՆԱ ԱՍՈՅԱՆԻՆ

Հարգելի տիկին Ասոյան

Ձեր 14.08.2018թ. №ԱԱ-009 գրության կապակցությամբ հայտնում ենք հետևյալը.

1) 2017թ. ընթացքում «Միջազգային էներգետիկ կորպորացիա» (ՄԷԿ) ՓԲԸ-ի (Սևան-Հրազդան կասկադ) կայաններում արտադրվել է 466,02 մլն կՎտxժ էլեկտրաէներգիա, օգտակար առաքումը կազմել է 456,93 մլն կՎտxժ:

Սևանա լճից օրենքով սահմանված՝ 170 մլն խմ-ից ավել բաց թողնված ջրաքանակի հաշվին՝ 2017թ-ի օգոստոսի 2-ից ժամը 15^{00} -ից մինչև սեպտեմբերի 14-ը ժամը 20^{00} ժամանակահատվածում «ՄԷԿ» ՓԲԸ-ի կողմից առաքված էլեկտրաէներգիան կազմել է 81,0 մլն կՎտxժ:

2) «ՄԷԿ» ՓԲԸ-ի ապրանքային արտադրանքը 2017թ-ին կազմել է 7571,54 մլն դրամ:

Սևանա լճից օրենքով սահմանված՝ 170 մլն խմ-ից ավել բաց թողնված ջրաքանակի հաշվին առաքված 81 մլն կՎտxժ էլեկտրաէներգիայի վաճառքից ՀՀ կառավարության 17.08.2017թ. №1018-Ն որոշման համաձայն հասույթի և կատարված ծախսերի տարբերությունից առաջացող շահույթը (լրացուցիչ շահույթ) «ՄԷԿ» ՓԲԸ-ում և «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ում կազմել է համապատասխանաբար՝ 545,030.0 հազ. դրամ և 1,100,109.6 հազ. դրամ:

3) Նշված ընկերությունների կողմից 2017թ. նոյեմբեր - 2018թ. հունվար ամիսների ընթացքում ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության արտաբյուջետային հաշվին է փոխանցվել 1,645,139.6 հազ. դրամ:

Ներկայումս շրջանառվում է ՀՀ կառավարության որոշման նախագիծ՝ վերը նշված գումարն ամբողջության պետբյուջե փոխանցելու համար:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ ԱՐԹՈՒՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Կատարող՝ ՖՏԿ տնտեսագիտական
բաժնի պետ Վ. Հայրապետյան
Հեռ. (011) 52-51-99